600.0370.27.09.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբերի 2018 թվականի №370Լ
ք.Երևան

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամների, աշխատակիցների և նրանց ընտանիքի անդամների համար սոցիալական ծրագրերի իրականացման և միանվագ դրամական օգնության տրամադրման կարգը հաստատելու մասին» N238Լ որոշմամբ հաստատված կարգում «աշխատակազմի ղեկավար» բառերը բոլոր հոլովաձևերով փոխարինել «գլխավոր քարտուղար» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

2. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամների և աշխատակիցների պարգևատրման կարգը հաստատելու մասին» N239Լ որոշմամբ հաստատված՝

1) կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետից հանել «աշխատակազմի» բառը,
2) կարգի «աշխատակազմի ղեկավար» բառերը բոլոր հոլովաձևերով փոխարինել «գլխավոր քարտուղար» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

3. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության հանրային

ծառայությունները կարգավորող հանձնաժողովի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների աշխատանքային ծրագրերի կազմման, հաստատման, աշխատանքային ծրագրերի հիման վրա կազմված հաշվետվությունների գնահատման և դրա հիման վրա պարգևատրման կարգը հաստատելու մասին» N160Լ՝

1) որոշումից հանել «աշխատակազմ» բառը՝ բոլոր հոլովաձևերով:
2) որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 20-րդ կետում «Հանձնաժողովի» բառը փոխարինել «Հանձնաժողովում» բառով, իսկ 21-րդ կետում «Տվյալ կիսամյակում տվյալ» բառերը փոխարինել «Տվյալ կիսամյակում Հանձնաժողովում» բառերով:

4. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի փետրվարի 6-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պաշտոնատար անձանց և աշխատակազմի ստորաբաժանումներին սպասարկող ծառայողական ավտոմեքենաների և դրանց շահագործման համար անհրաժեշտ վառելիքի սահմանաքանակները սահմանելու մասին» N26Լ՝

1) որոշումից հանել «աշխատակազմի» բառը,
2) որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում «աշխատակազմի ղեկավար» բառերը փոխարինել «գլխավոր քարտուղար» բառերով, իսկ վերնագրից և 7- 12-րդ տողերից հանել «աշխատակազմի» բառը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հոկտեմբերի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք.Երևան
27 սեպտեմբերի 2018թ.